

# Կենսաթոշակային բարեփոխումներ.

## Հանրային իրազեկում

### Ոչ միայն պետությունն, այլ նաև քաղաքացին

Միբեյի հայրենակիցներ,

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ է եղել կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը: Բարեկեցության բարձր մակարդակ ապահովելու համար մեր երկրի քաղաքացիները պետության հետ մեկտեղ կունենան սեփական ապագան կերտելու հնարավորություն:

Այդ բարեփոխումները մենք համարում ենք կարևորագույններից մեկը, որոնք մեր նորանկախ երկրի պատմության մեջ ամենաբարդն են ու Հայաստանի զարգացման համար ունեն առանցքային նշանակություն: Կենսաթոշակային բարեփոխումներն առնչվում են մեր կենսագործունեության բոլոր ոլորտներին և մեզնից յուրաքանչյուրին:

Հայաստանի Հանրապետությունն անցում է կատարելու պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգին: Այսուհետ յուրաքանչյուր մարդ հնարավորություն ունի ինքը ծրագրել ու ապահովել իր բարեկեցիկ ծերությունը: Բարեկեցության բարձր մակարդակ ապահովելու համար մեր երկրի քաղաքացիները պետության հետ մեկտեղ պետք է ստանձնեն սեփական ապագան կերտելու պարտավորությունը:

Մենք միասնաբար պետք է սովորենք մտածել մեր իսկ ապագայի մասին: Հայաստանի քաղաքացիները, սեփական աշխատանքով եկամուտ ստանալու պահից սկսած, պետության հետ միասին կարողանալու են հոգալ բարեկեցիկ ծերության մասին: Միասին մենք կարող ենք դնել ամուրի հիմք, որ մեր քաղաքացիների համար կենսաթոշակի անցնելը չնշանակի անցում դեպի աղքատություն, այլ հակառակը՝ կենսաթոշակն ապահովի բարեկեցիկ ու արժանապատիվ ծերություն:

Բարեփոխումների հիմքում այն հիմնադրույթն է, որ մեր քաղաքացիների ու տնտեսվարող սուբյեկտների համար հարկային բեռը չի ավելանալու: Գոյություն ունեցող սոցիալական վճարների և եկամտահարկի փոխարեն ներդնելու ենք միասնական եկամտային հարկ:

Միակ լրացուցիչ պարտավորությունը, որ դնում ենք մեր հայրենակիցների համար, այն է, որ յուրաքանչյուրս պետք է մտածենք ծերության մասին: Որպես հասարակություն՝ մենք պետք է սովորենք կուտակել:

Ոչ ոք մեր փոխարեն չի ստանձնելու պատասխանատվություն մեր իսկ ապագայի համար, և մենք պետք է ազատենք մեր երեխաներին այդ բեռից: Այդ անել պատրաստ պետք է լինենք մենք ու միայն մենք: Սա նշանակում է, որ միասին ձևավորելու ենք նոր մտածողություն, շուկայական տնտեսության կանոնների ներքո ապրելու կարողություններ և ներուժ ունեցող նոր սերունդ:

Առաջարկվող համակարգը բաղկացած է երեք մասից.

- Բազային սոցիալական կենսաթոշակ, որի ապահովման համար պատասխանատուն պետությունն է:
- Կուտակային՝ պետությունը և քաղաքացին միասին. պետությունը կկրկնապատկի ձեր ներդրումը:
- Կամավոր կուտակային՝ որպես լրացուցիչ կենսաթոշակի կուտակման հնարավորություն:

Այս ներդրի նպատակը կենսաթոշակային բարեփոխումների էությունն ու բովանդակությունը որոշակիորեն պարզաբանելն է: Սա հանրային իրազեկման մեր աշխատանքների միայն մի մասն է:

Մենք շարունակելու ենք հանրային իրազեկման ու կրթության աշխատանքները, որպեսզի մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացի զինված լինի իր բարեկեցիկ ծերությունն ապահովելու համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներով ու գործիքներով:

Տիգրան Սարգսյան  
Հայաստանի Հանրապետության վարչապետ



բարեփոխումների իրականացման փուլում հանրությանը ներկայացնել կենսաթոշակային բարեփոխումների կարևորությունն ու էությունը և ապահովել կուտակային նոր համակարգի շահառուների պատրաստվածությունն ու մասնակցությունը:

Կառավարությունը խստորեն հետևելու է, որ հանրային իրազեկման գործընթացը լինի թափանցիկ, ընդգրկի երկրի բոլոր տարածաշրջանները, լինի համակարգված և բնակչության բոլոր խավերի համար հասանելի, ապահովված լինի ճշմարիտ և ըմբռնելի ուղերձներով, քաղաքացիների մեջ չստեղծի կեղծ սպասումներ: Միաժամանակ կուտակային համակարգի մասնակիցների համար կիրականացվեն ֆինանսական գիտելիքի խորացման համապատասխան ծրագրեր՝ կենսաթոշակային նոր համակարգին նրանց առավելագույնս նախապատրաստելու նպատակով:

## ***ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին ընդառաջ***

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է **կենսաթոշակային բաշխողական համակարգ**, որը ֆինանսավորվում է զբաղված քաղաքացիների և նրանց գործատուների ընթացիկ մուծումների հաշվին: Աշխատող քաղաքացիների մուծումներից գոյացած գումարներն ամբողջովին ուղղվում են ընթացիկ կենսաթոշակների վճարմանը: Այսինքն՝ **ներկայիս աշխատողներն ապահովում են ներկայիս անաշխատունակ տարիքի անձանց կենսաթոշակները:**

2009 թվականի դրությամբ կենսաթոշակային ծախսերը հանդիսանում են ՀՀ պետական բյուջեի սոցիալական հատվածի ծախսերի ամենամեծ բաղադրիչը՝ գրեթե երկու անգամ գերազանցելով կրթության և ավելի քան երեք անգամ՝ առողջապահության համար կատարվող ծախսերը: Փորձագիտական հաշվարկները ցույց են տալիս, որ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի չափով կենսաթոշակ վճարելու համար կենսաթոշակային ծախսերը պետք է կրկնապատկվեն: Ակնհայտ է, որ կենսաթոշակների չափերի հետագա բարձրացումը հանգեցնելու է պետական բյուջեի դեֆիցիտի խորացմանը:

Պետության դերը կենսաթոշակների ապահովման առումով ծառայություն մատուցողի փոխարեն պետք է լինի որպես այդ ծառայությունը վերահսկող և կարգավորող: Մի՞թե ճիշտ չէ, որ կենսաթոշակների ֆինանսավորումը պետական բյուջեից հնարավորինս դուրս մղվի, ինչը հնարավորություն կտա ավելացնել սոցիալական պաշտպանության համակարգի մյուս երկու բաղադրիչներին՝ առողջապահությանն ու կրթական համակարգին ուղղվող միջոցները: Դա բազմապատիկ ազդեցություն կունենա հասարակության զարգացման, մրցունակության բարձրացման և կյանքի որակի բարելավման վրա: Այս բարեփոխումներն ուղղված են ապագային՝ ուղիղ և շարունակական կապ ունենալով տնտեսական կյանքի առօրյայի հետ: Յուրաքանչյուր տարի մենք մեր կյանքի վրա կզգանք դրանց ազդեցությունը տնտեսության աշխուժացման, մրցունակության բարձրացման և տնտեսական հարաբերությունների առողջացման համապատկերում:

Կենսաթոշակային բարեփոխումների անհապաղ իրականացումն օրախնդրային է նաև կապված երկրի ժողովրդագրական իրավիճակի էլ ավելի սրվելու հետ, որը կսկսվի արդեն 2011 թվականից: Երկրի ժողովրդագրական իրավիճակի կանխատեսվող վատթարացման հիմնական պատճառը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արձանագրված «ծնելիության բում» է: Հենց «ծնելիության բումի» սերունդն է առաջիկա տարիների ընթացքում համալրելու կենսաթոշակառուների շարքերը: Սրան գումարավելու են վերջին 20 տարվա ընթացքում ծնելիության կրճատումը, կյանքի սպասվող միջին տևողության ավելացումը, 90-ական թվականներին աշխատունակ տարիքի բնակչության





ցուցանիշերի վատթարացմամբ: Սոցվճարների դրույքաչափի եւ աշխատավարձի ներկա մակարդակի պայմաններում հավաքագրված սոցվճարները բավարար չեն լինելու միջին աշխատավարձի նկատմամբ միջին կենսաթոշակի անկումը կանխելու համար: Խոսքը կենսաթոշակների համարժեքության աստիճանը որոշող **փոխհատուցման գործակցի** մասին է, որն արտահայտում է միջին կենսաթոշակի և միջին անվանական աշխատավարձի հարաբերակցությունը: Վերջինս, ըստ կանխատեսումների, համակարգի ֆինանսական հաշվեկշռվածության պայմաններում, մոտակա 20 տարիների ընթացքում չի կարող գերազանցել 25 տոկոս միջին մակարդակը:

**Կենսաթոշակների ցանկացած «միանվագ բարձրացում» միջին և երկարաժամկետ հեռանկարում չի լուծելու (անգամ խորացնելու է) համակարգի ֆինանսական կայունության և կենսաթոշակների համարժեքության ապահովման ռազմավարական խնդիրները:**

### **Կենսաթոշակային բարեփոխումների միջազգային փորձը**

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակների վճարման հարցում ֆինանսական անկայունության իրավիճակում հայտնված երկրներն առաջացած խնդիրները լուծում են երեք պարտադիր անցումներ (տրանսֆորմացիաներ) կատարելու միջոցով.

1) սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային բաշխողական համակարգից անցում դեպի «ինքնաֆինանսավորվող» կուտակային համակարգ,

2) բանաձևերի հիման վրա հաշվարկվող և քաղաքական որոշումներով «սահմանվող կենսաթոշակի» (ՄԿ) մոդելից անցում դեպի իրական եկամուտների հիման վրա «սահմանված վճարների» (ՄՎ) մոդել,

3) պետության կողմից ուղղակիորեն կառավարվող կենսաթոշակային համակարգից անցում դեպի պետության կողմից կարգավորվող և վերահսկվող մասնավոր կենսաթոշակային համակարգ:

Առաջարկվող անցումները զուգահեռաբար և համահունչ կատարելու մեխանիզմները զանազանվում են երկրից երկիր: Սակայն դրանք բոլորն էլ ամփոփվում են մեկ ընդհանուր` **Քրազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրում**՝ գաղափարի մեջ, որը որդեգրել են աշխարհի` համակարգային բարեփոխումներ նախաձեռնած բոլոր երկրները:

Այսպիսով, կենսաթոշակային բարեփոխումների ռազմավարական ուղղությունը ընդհանուր է բարեփոխումների ուղին ընտրած բոլոր երկրների համար, այն է` **համերաշխության սկզբունքով գործող բաշխողական համակարգի «բեռնաթափում» ի հաշիվ անհատական սկզբունքով ֆինանսավորվող կուտակային կենսաթոշակային սխեմաների ներդրման:**

Կենսաթոշակային բարեփոխումներ իրականացնող բոլոր երկրները պահպանում են պետական բաշխողական համակարգերը որպես տարեց բնակչության աղքատությունից պաշտպանության միջոց: Այս առումով **կենսաթոշակային բաշխողական համակարգերը երկրների սոցիալական ապահովության (Social Security) պետական քաղաքականության անքակտելի մասն են:**

### **Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի Հայաստանի մոդելը**

ՀՀ կառավարությունը, գիտակցելով խնդրի լրջությունը, նախաձեռնում է կենսաթոշակային գործող համակարգի արմատական բարեփոխումներ, որոնց հիմնական ուղղություններն ու սկզբունքները, կարևորագույն պարամետրերը, կառուցվածքային շրջանակը և դրանց կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատվել են 2008թ. նոյեմբերին «ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագրով»: Համաձայն վերջինիս՝ կենսաթոշակային բարեփոխումները պետք է համակողմանիորեն նախապատրաստվեն և փուլ առ փուլ իրականացվեն ըստ երկու կարևոր նպատակադրումների.

- ա) կարճաժամկետ հեռանկարում ապահովել նվազագույն կենսաթոշակի համարժեքությունը նվազագույն սպառողական զամբյուղին,
- բ) երկարաժամկետ հեռանկարում ապահովել անհատի եկամուտներից կատարվող վճարումների և կենսաթոշակների կապը:

Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի հայաստանյան մոդելը խարսխված է գործող բաշխողական համակարգի վրա, որն ըստ էության լրացվել է երկու նոր՝ պարտադիր և կամավոր կուտակային աստիճաններով: Այդօրինակ մտտեցումը հայաստանյան պայմաններում պարտադրված էր երկու կարևոր հանգամանքով.

**Առաջին.** անհրաժեշտ էր պահպանել պետական բաշխողական կենսաթոշակային համակարգն այնքանով, որքանով այդ համակարգն սպասարկում է ներկայիս կենսաթոշակառուներին և պետք է սպասարկի կենսաթոշակային տարիքին մտտեցող այն՝ բնակչությանը, որն արդեն իսկ «կուտակել է» որոշակի կենսաթոշակային իրավունքներ՝ աշխատանքային ստաժի տեսքով: Այս առումով բաշխողական համակարգի դերը գնալով կպակասի՝ հաշվի առնելով բնակչության կյանքի միջին տևողության կանխատեսվող միտումները:

**Երկրորդ.** պետական բաշխողական կենսաթոշակային համակարգը պետք է միշտ պահպանվի (սակայն ավելի փոքր ծավալներով), քանի որ այն պետք է նվազագույն սպառողական զամբյուղին համարժեք հիմնական (բազային) կենսաթոշակով ապահովի երկրի կենսաթոշակային տարիքի (63 տարեկան) բոլոր քաղաքացիներին՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք կենսաթոշակային համակարգի որ աստիճանի մասնակիցներն են:

Երրորդ՝ պետական բաշխողական համակարգից են վճարվելու նաև սոցիալական կենսաթոշակները՝ համապատասխան աշխատանքային ստաժ կամ կուտակումներ չունեցող (և 65 տարեկանը լրացած), ինչպես նաև անաշխատունակ և կերակրողին կորցրած անձանց:

Միասնական (բաշխողական և կուտակային) բազմաստիճան կենսաթոշակային համակարգի հայաստանյան մոդելը ներառում է.

**1. Կենսաթոշակային համակարգի «0» աստիճանը»** որը պահանջվող աշխատանքային (ապահովագրական) ստաժ ն/կամ բավարար կենսաթոշակային կուտակումներ չունեցող անձանց ծերության» հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքերում պետական բյուջեի հաշվին ապահովվելու է նվազագույն սպառողական զամբյուղին համարժեք կենսաթոշակով:

Կենսաթոշակային համակարգի «0» աստիճանից վճարվելու է **սոցիալական կենսաթոշակ:**

**2. Կենսաթոշակային համակարգի «1-ին» աստիճանը»** որը օրենքով սահմանված ժամանակահատվածում ֆորմալ տնտեսությունում աշխատած և համապատասխան հարկեր (սոցիալական վճարումներ) վճարած անձանց կենսաթոշակային տարիքը լրանալու» հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքերում պետական բյուջեի հաշվին փոխհատուցելու է կորցրած եկամուտը:

Կենսաթոշակային համակարգի «1-ին» աստիճանից վճարվելու է **աշխատանքային կենսաթոշակը»** որը բաղկացած է լինելու հիմնական (բազային) կենսաթոշակից և ապահովագրական (աշխատանքային) ստաժի համար տրվող հավելումից:

Հիմնական (բազային) կենսաթոշակի չափը պակաս չի լինելու սոցիալական կենսաթոշակից:

**3. Կենսաթոշակային համակարգի «2-րդ» աստիճանը»** որը պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարներ կատարած անձանց կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում փոխհատուցում է կորցրած եկամուտը կատարված վճարներից և դրանց ներդրումից ստացված եկամուտներից գոյացած միջոցների հաշվին:

Կենսաթոշակային համակարգի «2-րդ» աստիճանից վճարվելու է **կուտակային կենսաթոշակ:**

2014 թվականի հունվարի 1-ից **պարտադիրության սկզբունքով** պարտադիր կուտակային համակարգի մասնակից են դառնում այն վարձու աշխատողները՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ անկախ քաղաքացիությունից՝ ովքեր չեն բոլորել 40 տարեկանը:

Պարտադիր կուտակային բաղադրիչը հասանելի է նաև 40-ից բարձր տարիքի անձանց համար՝ ովքեր **կամավորության սկզբունքով** կցանկանան միանալ կենսաթոշակային համակարգի «2-րդ» աստիճանին: Զինծառայողների և գյուղացիական տնտեսություն ունեցողների համար կիրառվելու է միայն կամավորության սկզբունքը՝ անկախ տարիքից:

Կուտակային համակարգի «2-րդ» աստիճանի պարտադիրության սկզբունքով մասնակիցների համար կուտակային վճարների դրույքաչափը սահմանվում է աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 10 տոկոսի չափով՝ որի կեսը կամ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 5 տոկոսը՝ բայց ոչ ավելի՝ քան 25000 դրամը՝ վճարում է պետությունը: Այսինքն՝ եթե աշխատավարձը ցածր է 500.000 դրամից՝ ապա պետությունը կվճարի այդ գումարի 5 տոկոսի չափով՝ իսկ եթե աշխատավարձը բարձր է 500.000 դրամից, պետության մասնակցությունը կկազմի ամսական 25.000 դրամ՝ յուրաքանչյուր աշխատողի համար: Այսպիսով՝ 500.000 դրամից



բարձր աշխատավարձ ստացող անձանց կողմից փաստացի կատարվող կուտակային վճարը կգերազանցի իրենց աշխատավարձի 5 տոկոսը:

Այն անձանց համար՝ ովքեր պարտադիր կուտակային «2-րդ» աստիճանին մասնակցելու են կամավորության սկզբունքով՝ կուտակային վճարների դրույքաչափը սահմանվում է աշխատավարձի 5 տոկոսի չափով՝ առանց պետության մասնակցության (պետությունն այս անձանց համար կուտակային վճար չի կատարելու):

Անկախ տարիքից՝ պարտադիր կուտակային աստիճանի մասնակիցը վճարում է եկամտահարկ՝ որի դիմաց կենսաթոշակի անցնելիս նա ստանում է հիմնական (բազային) կենսաթոշակ:

Պարտադիր կուտակային «2-րդ» աստիճանին վճարում կատարած անձինք ստանում են՝

#### Տարբերակ 1.

**հիմնական (բազային) կենսաթոշակ + կուտակային կենսաթոշակ**՝ եթե նրանց տարիքը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ փոքր է եղել 40 տարեկանից և կենսաթոշակի անցնելու պահին ձեռք են բերել պահանջվող ստաժ և մինչև կուտակային համակարգում ընդգրկվելը գործող համակարգին որևէ վճարում չեն կատարել:

#### Տարբերակ 2.

**հիմնական (բազային) կենսաթոշակ + գործող համակարգում կուտակած աշխատանքային ստաժի տարիների համար հավելում (աշխատանքային կենսաթոշակ) + կուտակային կենսաթոշակ**՝ եթե՝

նրանց տարիքը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ փոքր է եղել 40 տարեկանից և կենսաթոշակի անցնելու պահին ձեռք են բերել պահանջվող ստաժ և մինչև կուտակային համակարգում ընդգրկվելը գործող համակարգին կատարել են վճարումներ:

#### Տարբերակ 3.

**հիմնական (բազային) կենսաթոշակ + աշխատանքային կենսաթոշակ + կուտակային կենսաթոշակ**՝ եթե՝

նրանց տարիքը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ մեծ է եղել 40 տարեկանից և կենսաթոշակի անցնելու պահին ձեռք են բերել պահանջվող ստաժ և կամավորության սկզբունքով ընդգրկվել են պարտադիր կուտակային համակարգում:

#### Տարբերակ 4.

**սոցիալական կենսաթոշակ + կուտակային կենսաթոշակ**՝ եթե՝

նրանք պարտադիրության կամ կամավորության սկզբունքով մասնակցել են պարտադիր կուտակային համակարգին և կենսաթոշակի անցնելու պահին չեն ունեցել բավարար (օրենքով պահանջվող) աշխատանքային ստաժ և/կամ իրենց կուտակումներն օրենքով սահմանված չափից քիչ են :

**4. Կենսաթոշակային համակարգի «3-րդ» աստիճանը**, որը նախատեսված է բոլոր այն անձանց համար, ովքեր ցանկանում են լրացուցիչ կենսաթոշակներ ստանալու

նպատակով մասնակցել մասնավոր ֆինանսական կառույցների (ապահովագրական ընկերությունների և/կամ կենսաթոշակային հիմնադրամների) կողմից առաջարկվող զանազան կենսաթոշակային կուտակային սխեմաներին: «3-րդ» աստիճանին կարող են մասնակցել բոլոր աշխատողները՝ անկախ տարիքից: Կենսաթոշակային վճարների դրույքաչափերը և կենսաթոշակների վճարման պայմաններն այս դեպքում հաստատվում են պայմանագրային հիմունքներով:


Կենսաթոշակային համակարգի «3-րդ» աստիճանից վճարվելու է **կամավոր կուտակային կենսաթոշակ**:

**ձևաձևը են կենսաթոշակային նոր համակարգի բաղադրիչները**

0	I 40>	II սխեմա II 40>	II սխեմա I <40	III
		Կուտակային (պարտադիր) կենսաթոշակ		Կուտակային (կամավոր) կենսաթոշակ
Սոցիալական կենսաթոշակ	Աշխ սուսնքային կենսաթոշակ	Աշխ սուսնքային կենսաթոշակ	Կուտակային (պարտադիր) կենսաթոշակ	
	Հիմնական (բազային) կենսաթոշակ			

1010

*Գծապատկերը կազմված է «ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի» հիման վրա:*



**Գծապատկերը կազմված է «ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի» հիման վրա:**

Բազմաստիճան կենսաթոշակային համակարգը ներդրվելու է երկու փուլով. 2011 թվականի հունվարի 1-ից կներդրվի կամավոր կուտակային «3-րդ» աստիճանը, 2014 թվականի հունվարի 1-ից՝ պարտադիր կուտակային «2-րդ» աստիճանը:

Կենսաթոշակային բարեփոխումների կառուցվածքային շրջանակն ապահովելու նպատակով մշակվել և 2010 թվականի հունիսին ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցումն են անցել հետևյալ օրենքների նախագծերը.

- «Պետական կենսաթոշակների մասին»,
- «Կուտակային կենսաթոշակների մասին»,
- «Եկամտային հարկի մասին»,
- «Եկամտային հարկի և կուտակային վճարների անձնավորված հաշվառման մասին»,
- «Ներդրումային ֆոնդերի մասին»:

1. Գործող բաշխողական բաղադրիչի հիմքերի վրա կուտակային բաղադրիչի ներդրմամբ կենսաթոշակային բարեփոխումների նախագծումը երկարաժամկետ առումով շահավետ է բնակչության բոլոր խմբերի համար, քանի որ ապահովում է.
  - արդյունավետ և հասցեական սոցիալական պաշտպանություն տարեց բնակչության համար
  - ավելի քիչ պետական ծախսերով ավելի բարձր կենսաթոշակներ բնակչության բոլոր խավերի համար
  - խթանների ստեղծում երկար աշխատելու, բարձր վարձատրվելու և եկամուտների բաշխումը բարելավելու համար
  
2. Արմատական կենսաթոշակային բարեփոխումներ իրականացրած Արևելյան Եվրոպայի և Լատինական Ամերիկայի երկրների փորձը վկայում է, որ բարեփոխումների հաջողությունը կախված է.
  - կառավարությունների քաղաքական կամքից և համոզմունքից
  - հանրության իրազեկվածությունից և տեղեկացվածությունից
  - հասարակական-քաղաքական ուժերի համագործակցությունից
  - համալիր ծրագրի առկայությունից և միջոցառումների համակարգված ու հետևողական իրականացումից
  
3. Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումը կենսականորեն անհրաժեշտ է աշխատողների բոլոր խմբերի արդյունավետ սոցիալական պաշտպանության համար, քանի որ
  - բաշխողական (ոչ կուտակային) «0» և «1-ին» աստիճանները պաշտպանում են կենսաթոշակառուներին աղքատությունից
  - պարտադիր կուտակային «2-րդ» աստիճանն ապահովում է աշխատողների եկամուտների փոխհատուցումը
  - կամավոր կենսաթոշակային «3-րդ» աստիճանն աշխատողներին հավելյալ կենսաթոշակ ստանալու հնարավորություն է ընձեռում :

Կենսաթոշակային բարեփոխումների հանրային իրազեկման աշխատանքային խումբն ակնկալում է շահագրգիռ բոլոր կողմերի ակտիվ մասնակցությունը կենսաթոշակային բարեփոխումների իրականացման գործընթացին:

Նյութերը պատրաստվել են Կենսաթոշակային բարեփոխումների հանրային իրազեկման աշխատանքային խմբի կողմից:

---

Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն

Տպաքանակը՝ 5500 օրինակ